ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<17>> նոյեմբերի 2025թ. N ՄՈ/ 974 -Ա

ք. Արմավիր

## «ԳԵՂԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՈՒՇ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 108.2-րդ հոդվածի 1.1-ին, 1.2-րդ և 2.1-ին մասերով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի հանրային ծառայության շահերի դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի 2025 թվականի նոյեմբերի 14-ի N18-2250կգ-25 գրությունը.

**որոշում եմ՝**

1. «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Համբարձումյանի տնային կալանքի տակ գտնվելու պահից՝ 2025 թվականի նոյեմբերի 9-ից մինչև տնային կալանքի վերացումը պահպանել նրա աշխատատեղը (պաշտոնը):
2. Անուշ Համբարձումյանի տնային կալանքի տակ գտնվելու պահից՝ նոյեմբերի 9-ից մինչև տնային կալանքի վերացումը, նրա վարձատրությունն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափի երկու երրորդին՝ 212202 (երկու հարյուր տասներկու հազար երկու հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ